

ԸՆԿԵՐԻՍ ԵՐԳԸ

Զ. ԲԱԼՈՒՂԵԱՆՑԻ

Խնչպէս ճամբորդը, շոքից տառապած,
Առնում է հանգիստ մի ըովէ ստեղում,
Ճընջող դարդերը մի կողմը թողած՝
Առուակի անոլշ կարկաջին լըսում։
Եւ, ըովէական մի քաղցըր անդորր
Խւր սըրտի մէջը յանկարծ ըզգալով,
Նա փալփալում է, կարծես, մի ցընորք...
Ցընորք,—որ չը կայ ճամբան աւազով։
Կանաչ ծառի տակ, զովասուն հովառում
Խըփում է նա իւր ճանրացած կոպեր...
Նա, աւաղ, իրան խաբել է ջանում...
Խաբել,—թէ հասաւ կարօտած վալրեր։
Ալդպէս երբեմըն ինքըս, խաբւելով,
Կարծում եմ, ահա հասած ենք ափին,
Երբ դու ինձ, ընկեր, ոգեսրւելով,
Երգում ես սիրոյ, ճըշմարտի մասին։
Եւ ես, մի վալրկեան հանգիստ վլնտուելով,
Ճամբորդի նըման փակում եմ աչքեր
Եւ, ազնիւ երգին ականջ դընելով,
Զանում եմ ցըրել մըռալլ պատկերներ...
—